

սահմանված նորմատիվները՝ կախված տնտեսության ընդհանուր վիճակից, սեզոնային ու մրցակցային տատանումներից: Մեր կարծիքով, սահմանված գործակիցների օպերատիվ վերլուծության համար կարելի է օգտագործել եռամսյա, վեցամսյա, իննամսյա և իրացվելիության այլ գործակիցներ, որոնք հիմնվում են ակտիվային և պասիվային հոդվածների հարաբերակցությունների վրա՝ ներառելով ըստ սահմանված ժամկետի (3, 6 և այլն ամիսներով) ներգրավված և տեղաբաշխված միջոցները: Ընդ որում, որքան փոքր է ներգրավված ավանդի (դեպոզիտի) ժամկետը, այնքան պետք է բարձր լինի իրացվելիության գործակիցը: Միաժամանակ ակտիվի և պասիվի հոդվածների համեմատումն ըստ ժամկետների՝ կարևոր է կատարել ըստ յուրաքանչյուր հաճախորդի՝ օգտագործելով անալիտիկ հաշվառման տվյալները:

Բանկի իրացվելիության պահպանման լրացուցիչ գործոններից են համարվում նաև մեկ վարկառուին տրամադրվող վարկի գումարի չափի սահմանափակումը և վարկերի դիվերսիֆիկացիան, այսինքն՝ դրանց տրամադրումը հնարավոր է մեծ թվով հաճախորդներին՝ պահպանելով վարկի ընդհանուր գումարի չափը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը առևտրային բանկերի միջոցով իր իրացվելիությունը պահպանելու համար սահմանել է կոնկրետ պարտադիր հարաբերակցություններ բանկի սեփական և ներգրավված միջոցների միջև: Հաշվեկշռի իրացվելիության գործակիցների վերլուծության գործընթացում կարող են բացահայտվել շեղումներ՝ մի կողմից դրանց թույլատրելի արժեքների իջեցմամբ, մյուս կողմից որոշակիորեն դրանց էական բարձրացմամբ: Առաջին դեպքում առևտրային բանկերին իրավունք է վերապահվում մեկամսյա ժամկետում իրականացնել իրացվելիության գործակիցների հաշվարկներ՝ նորմատիվային արժեքներին համապատասխան: Բանկերը դա կարող են անել միջբանկային վարկերի, կրեդիտորական պարտքերի կրճատման, ինչպես նաև բանկի սեփական միջոցների ավելացման հաշվին: Չնայած պետք է ի նկատի ունենալ, որ նոր բաժնետոմսերի թողարկմամբ լրացուցիչ կապիտալի ներգրավումը կհանգեցնի շահաբաժինների կրճատմանն ու փայտերերի դժգոհությանը: Առևտրային բանկերի կողմից կենտրոնական բանկի սահմանած իրացվելիության նորմատիվներից յուրաքանչյուրի գծով շեղում լինելու դեպքում մեծացվում է հատկացումներ կատարելու չափը պարտադիր պահուստային հիմնադրամում¹:

Այսպիսով, բանկի ֆինանսական կայունությունը նրա գոյատևման և հաշվարկա-վարկային ակտիվ գործունեության իրականացման վճարող պայմաններից մեկն է: Դրա համար բանկի ֆինանսական դրության վերլուծության ժամանակ խիստ կարևորվում է իրական գնահատական տալը՝ նրա հոսալիության, հաշվեկշռի իրացվելիության և սահմանված տնտեսական նորմատիվների վերահսկման, ինչպես նաև գործունեության արդյունավետության վերաբերյալ:

Ա. ԲԱՏԻԿՅԱՆ

*Ճարտարապետա-շինարարական
համալսարանի ասպիրանտ*

ՖՈՆԴԵՐԸ ՈՐՊԵՍ ՆՈՐԱՄՈՒՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Կազմակերպությունների այնպիսի կազմակերպատվական ձևը, ինչպիսին ֆոնդերն են, տարածում են գտել հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում:

Իրավունքների սահմանափակությունը և հասարակության համար նշանակալի նպատակներին հասնելու ուղղվածությունը ֆոնդերը վերածվում են պետական քաղաքականության իրականացման յուրահատուկ գործիքի՝ ֆինանսական, սոցիալական, գիտական և այլ բնագավառներում:

Ֆոնդերի նպատակային գործունեության իրականացումն ապահովելու համար պետությունը ֆոնդերին տրամադրում է մի շարք հարկային և այլ արտոնություններ:

Հարկային արտոնություններից օգտվելու հնարավորությունը և գործունեության իրավական կարգավորման անբավարար աստիճանը նպաստել են դրանց արագորեն ավելացմանը նաև ձեռնարկատիրության բնագավառում: Պետական և ոչ պետական ֆոնդերը հիմնականում ծառայել են մեկ նպատակի՝ հավաքագրելու և վերաբաշխելու միջոցները: Պետական մակարդակով այդ նպատակի համար ստեղծվում են պետական արտաբյուջետային ֆոնդեր, որոշակի միջոցների ֆոնդեր, գիտական ֆոնդեր և այլն: Մասնավոր ֆոնդերը ամենից հաճախ ստեղծվում են տրամադրվող հարկային և այլ արտոնություններից օգուտ քաղելու նպատակով: Վերջերս, խստացնելով ֆոնդերի գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ակնկալվում է, որ ձեռներեցության ոլորտում դրանց հետագա ավելացումը կկանխվի: Եվ այդ ամենի հետ մեկտեղ ֆոնդերի օգտագործումը որպես գործիք՝ իրականացնելու համար պետական որոշակի քաղաքականություն, զարգացման նոր թափ է առնում:

Նորամուծական գործունեությունը վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախ է հայտնվում պետության ուշադրության կենտրոնում: Այս փաստի մասին են վկայում «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգի», «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թվականների ծրագրի», «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի և ոլորտին առնչվող այլ փաստաթղթերի ընդունումը, ինչպես նաև այլ իրավական ակտերում կատարվող համապատասխան փոփոխություններն ու լրացումները:

¹ Բանկային գործ. Բ. Ասատրյանի խմբագրությամբ, Երևան 2004, 720 էջ:

Ակնհայտ է նաև, որ տնտեսությունում և օրենսդրական դաշտում գոյություն ունեն մի շարք խոչընդոտներ, որոնք խանգարում են նորամուծական ակտիվության բարձրացմանը, որն էլ հանդիսանում է մեր երկրի մրցունակության բարձրացման հիմնական գործիքներից մեկը՝ կապված երկրում հսկայական մտավոր ներուժի առկայության հետ: Եթե դիտարկենք գիտության ներկայիս վիճակը և այն խնդիրները, որոնք ծառացած են վերջինիս զարգացման ճանապարհին, առաջին հերթին կարելի է առանձնացնել գիտության ոլորտի կազմակերպությունների կազմակերպչական և ակադեմիկական ձևերի անկատար կառուցվածքը: Այստեղ գրեթե բացակայում են մասնավոր հիմունքներով գործող գիտական կազմակերպությունները:

Մտավոր և նորամուծական գործունեության ոլորտներում պետական գիտատեխնիկական քաղաքականության իրականացման արդյունավետությունը պայմանավորող հիմնական խնդիրներից է գիտական կազմակերպությունների ապապետականացումը: Հայաստանի «գիտության» ապապետականացման շրջանակներում ֆոնդերը կարող են հանդիսանալ որպես կազմակերպությունների նյութական բազայի կառավարմանը պետության մասնակցության վերացման հիմնական մեխանիզմ: Այսպիսով, պետական գիտական կազմակերպությունների վերակազմավորումը ֆոնդերի տեսքով ամենից շատն է համապատասխանում գիտատեխնիկական ոլորտի գիտական կազմակերպությունների ապապետականացման առանձնահատկություններին:

Ֆոնդերը որպես գիտական կազմակերպությունների կազմակերպչական և ակադեմիկական ձև օգտագործելու առաջարկությունն իր մեջ նորություն են պարունակում ինչպես գիտատեխնիկական գործունեության պետական կարգավորման բնագավառի, այնպես էլ մասնավոր ոլորտում առկա փորձի տեսանկյունից: Այս կապակցությամբ նպատակահարմար է հանգամանորեն ուսումնասիրել ֆոնդի, որպես գիտական կազմակերպության ներուժային ենթակառուցվածքի, կազմակերպչական և ակադեմիկական ձևը:

Գործող քաղաքացիական օրենսգրքի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել ֆոնդի հետևյալ առանձնահատկությունները.

- ֆոնդը ոչ առևտրային կազմակերպություն է, այսինքն՝ շահույթի ստացումը չի հանդիսանում որպես հիմնական նպատակ և շահույթը չի բաշխվում մասնակիցների միջև,
- ֆոնդերը անդամային կազմակերպություններ չեն, այսինքն՝ միջոցներ հատկացնողները պատասխանատվություն չեն կրում ֆոնդերի գործունեության համար, վերջինս էլ իր հերթին պատասխանատվություն չի կրում միջոցները հատկացնողների գործողությունների համար,
- ֆոնդը հետապնդում է սոցիալական, հասարակության համար օգտակար նպատակներ, որոնք սահմանվում են միջոցները հատկացնողների կողմից,
- ֆոնդն իրավունք ունի ունենալու սեփական միջոցներ և օգտագործելու դրանք միայն հասարակության համար օգտակար նպատակներով,
- ֆոնդը կարող է լուծարվել միայն դատարանի որոշմամբ,
- ֆոնդի գործունեությունը ենթակա է վերահսկման հոգաբարձուների խորհրդի կողմից, իսկ վերջինիս գործունեությունը՝ տարեկան հրապարակման:

Ֆոնդերի ինքնուրույնությունը և միաժամանակ իրավունքների սահմանափակությունը այն հիմնական առանձնահատկություններն են, որոնք դարձնում են կազմակերպչական այս ձևի օգտագործումը նպատակահարմար ոչ պետական գիտական կազմակերպությունների գործունեության համար: Որոշ մասնագետների կարծիքով ֆոնդեր կարող են հանդիսանալ միայն ոչ մեծ և տնտեսապես արդյունավետ կազմակերպությունները, որոնց գործունեությունն ուղղված չէ շահույթի ստացմանը: Այն գիտական կազմակերպությունները, որոնք իրականացնում են այնպիսի գործունեություն, որն ուղղված է մտավոր գործունեության արդյունքների իրացումից շահույթի ստացմանը, նպատակահարմար է վերակազմավորել որպես առևտրային կազմակերպություններ: Սակայն, կարծես թե, այդպիսի կազմակերպությունները փոքրամասնություն են կազմում, այն դեպքում, երբ գիտական հաստատությունների մեծ մասը ներգրավված են մտավոր գործունեության արդյունքների ստեղծման մեջ, բայց գրեթե հնարավորություն չունեն մասնակցելու դրանց իրացմանը: Այդ կազմակերպությունների ներգրավումը նորամուծական գործունեության մեջ այն խնդիրն է, որը դեռ հարկավոր է լուծել: Որպես առաջին քայլ կարող է դառնալ այդպիսի կազմակերպությունների վերակազմավորումը ոչ առևտրային ֆոնդերի:

Օրենքը չի արգելում ֆոնդերին ծավալել ձեռնարկատիրական գործունեություն, որից ստացված շահույթը ուղղվում է աշխատանքի հիմնական ուղղությունների զարգացմանը: Անհրաժեշտ է նաև ընդգծել ֆոնդերի յուրահատուկ կարգավիճակը որպես հարկատուների, ինչը թույլ է տալիս դրանց ստանալու և փոխանցելու գիտական և նորամուծական գործունեություն իրականացնելու համար նախատեսված նպատակային միջոցները, առանց հարկեր վճարելու: Սահմանված կարգով գիտական և նորամուծական գործունեություն իրականացնելիս հարկային բեռի թեթևացումը դրական ազդեցություն կունենա մտավոր գործունեության արդյունքների ստեղծմամբ զբաղվող կազմակերպությունների գործունեության արդյունավետության վրա: Սակայն, այդ արդյունքների առևտրայնացումն իրականացվում է համընդհանուր խաղի կանոններով:

Ֆոնդերի, որպես պետական նորամուծական քաղաքականության իրականացման գործիքի, օգտագործումը չի սահմանափակվում գիտական կազմակերպությունների ապապետականացման մեխանիզմի ստեղծմամբ: Ծանոթանալով Եվրոպական երկրների փորձին՝ պարզվում է, որ գիտական կյանքում հայտնվելու պահից սկսած ֆոնդերը պետության կողմից օգտագործվել են որպես գիտական և նորամուծական գործընթացի կազմակերպման գործիք: Այդպիսի մեխանիզմի անհրաժեշտությունը պայմանավորված է մի կողմից՝ գիտության ավանդական կազմակերպական ձևերի, հետազոտական աշխատանքների ծավալի և կառուցվածքի միջև գոյություն ունեցող անհամապատասխանությամբ, մյուս կողմից՝ այդ հետազոտությունների ֆինանսական և ռեսուրսային ապահովման հնարավորությունների կտրուկ անկմամբ: Սովետական ժամանա-

կաշրջանում այդ անհամապատասխանությունը փոխհատուցվում էր գիտության ապահովման հանդեպ էքստենսիվ մոտեցմամբ: Սակայն շուկայական տնտեսության պայմաններում ակնհայտ դարձավ ոչ միայն գիտության էքստենսիվ ուղով զարգացման անհնարիությունը, այլև այդպիսի պայմաններում գիտական հետազոտությունների հեռանկարային ուղղությունների ընտրության անհրաժեշտ մեխանիզմի և հետազոտական ծրագրերի ձևավորման բացակայությունը: Բացակայում էր անընդհատ գործող գիտական փորձաքննության համակարգը, մշակված չէր հասցեական ֆինանսավորման համակարգը և ի վերջո ստեղծված չէին բավարար պայմաններ ազատ ստեղծագործական ինքնարտահայտման համար:

Հաշվի առնելով զարգացման էքստենսիվ ուղուց ինտենսիվին անցնելու անհրաժեշտությունը՝ հիմնված կառուցվածքի վերակազմավորման և կառավարման օպտիմալացման վրա, դեռ 1990-ական թվականների կեսերին Ռուսաստանի Դաշնությունը փորձեր է կատարել ներմուծելու և օգտագործելու ֆոնդերը որպես ենթակառուցվածքի տարր, իբրև կազմակերպական և խթանող ուժ գիտատեխնիկական գործունեության կարգավորման շրջանակներում: Այդ ժամանակահատվածում ֆոնդերի խնդիրներն էին՝ լավագույն գիտական մտահղացումների ընտրությունը և դրանց իրականացմանն աջակցությունը, ստացված արդյունքների վերլուծությունը և տարածումը հասարակության շրջանում ու արդյունաբերությունում:

Ֆինանսավորման անկայունության, մրցութային գործունեությանը վերաբերող օրենսդրության անբավարար մշակման, մտավոր սեփականությանը և գիտելիքների առևտրայնացմանն առնչվող խնդիրների գծով օրենսդրության անբավարար վիճակի, միջազգային գիտական գործունեության հետ կապված իրավական և ֆինանսական մի շարք հարցերի թերի մշակման պայմաններում ֆոնդն օգտագործվում է պետության կողմից որպես գիտատեխնիկական և նորամուծական գործունեության իրականացման գործուն լծակ:

Այնուամենայնիվ, ֆոնդը, որպես ոչ պետական գիտական կազմավորման գործողության ձև, դարձել է նորամուծական գործունեության պետական կարգավորման կազմակերպարարական մեխանիզմի տարրերից մեկը, քանի որ այն միանշանակ կարելի է դասել նորամուծական ենթակառուցվածքի տարրերի շարքին: Այն գործում է նորամուծական գործընթացի բոլոր փուլերում՝ սկսած նորամուծական նախագծերի իրականացման առաջնային փուլերից: Ֆոնդն իբրև նորամուծական ենթակառուցվածքի տարր և գիտական կազմակերպության օպտիմալ կազմակերպարարական ձև կոչված է վերացնելու գիտություն-տեխնոլոգիա-արտադրություն-շուկա շղթայում առկա անջրպետները: Այսպիսով, կան բոլոր հիմքերը համարելու, որ ֆոնդը հատուկ կազմակերպական կառուցվածք է, որը ունակ է ձևում ձևով արձագանքելու շուկայի պահանջներին և վերլուծելու այնտեղ տեղի ունեցող փոփոխությունների միտումները, ունենալու այս կամ այն ճյուղում գիտական, տեխնոլոգիական մշակումների վերաբերյալ համակարգված տեղեկատվություն, այդ հիմքի վրա ընտրելու հեռանկարային գիտական մշակումները, ստեղծելու մեխանիզմներ, որոնք թույլ կտան գիտնականներին գործնականում զարգացնել իրենց մտքերը և դրանից ստանալ շահույթի համապատասխան մասնաբաժինը:

Ա. ԲԱՏԻԿՅԱՆ

*Ճարտարապետա-շինարարական
համալսարանի ասպիրանտ*

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԶԱՅԼԵՐԸ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Անկախության ձեռքբերումից հետո, տնտեսական զարգացման հեռանկարներն արդեն կապելով սեփական միջոցների ու ռեսուրսների հետ, ակնհայտ դարձավ, որ վերջիններիս ոչ շռայլ լինելու պայմաններում պետք է գոնե եղածներից առավելագույն օգուտ քաղել:

Հայաստանի Հանրապետությունում մտավոր ներուժն այն էական ռեսուրսն է, որի արդյունավետ օգտագործումը կարող է զգալիորեն մեղմացնել այն բացասական ազդեցությունը տնտեսության վրա, որն առաջ է գալիս առկա բնական պաշարների և տրանսպորտային ուղիների սահմանափակումների պայմաններում:

Նորամուծական գործունեության համար բարենպաստ միջավայրի ապահովումը բնակչության կենսամակարդակի ու երկրի տնտեսության մրցունակության բարձրացման, շրջակա միջավայրի պահպանության ու պաշտպանունակության ամրապնդման հիմքն է հանդիսանում: Այս առումով պետության կողմից կատարվել են որոշակի քայլեր. մասնավորապես այս ոլորտում արդեն իսկ ձևավորվել է որոշակի իրավական դաշտ:

Նորամուծական գործունեության ոլորտում իրավական դաշտի ստեղծման առաջին քայլը կատարվեց 2005թ.-ին, երբ մշակվեց «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգ», որի նպատակը երկրի կայուն և անվտանգ զարգացումն ու մրցունակության բարձրացումն էր, բարենպաստ նորամուծական միջավայր ապահովող համաշխարհային տնտեսական համակարգում տնտեսական և գործընկերային գրավչություն ունեցող ազգային նորամուծական համակարգի հետևողական ձևավորմանը, նրա հիմքերը դնելու համար անհրաժեշտ ամենակարևոր տարրերի ու ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանն ուղղված քաղաքականության մոտեցումների և սկզբունքների ամրագրումն էր:

Որպես հայեցակարգի ընդունման անհրաժեշտություն նշվում է Հայաստանի տնտեսության զարգացման այնպիսի մոդելի ընտրության հրամայականը, որի հիմքում դրված կլինի գիտելիքների գործնական կիրառությունը:

Հայեցակարգի ընդունումն այս ոլորտում առաջին լուրջ քայլն էր և այն պարունակում է ազգային նորամուծական համակարգի ձևավորման, նորամուծական ձեռնարկատիրության զարգացման, ոլորտի օրենսդրական դաշտի թերությունների վերացման և կատարելագործման, նորամուծական ենթակառուցվածքի զարգացման, վեճաբարային և լիզինգային համակարգերի ձևավորման նախաձեռնողական մոտեցում: Ինչպես